ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության փորձագետ Գոհար Սաթունցի

Ես՝ Գոհար Սաթունցս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024թ.-ի հունվարի 9-ից (2024թ. հունվարի 9-ին կնքված Պայմանագրի համաձայն):

2024թ.-ի հուլիսի 10-ից մինչև 2024թ. սեպտեմբերի 9-ը ներառյալ, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Բյուջետային վարկերից և երաշխիքներից բխող ֆիսկալ ռիսկերի բացահայտում, ազդեցության քանակական գնահատականների ստացում, վարկառուի վարկունակության և ֆինանսական վիճակի գնահատում՝ մասնավորապես «Վ.Ա. ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» կազմակերպության մասով, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ տեղեկանքների ներակայացում.
- «Բանկերի վերակառուցման մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակում վերակառուցման հիմնադրամին պետական արտակարգ աջակցության տրամադրման ուղղությամբ մանրամասն ուսումնասիրության իրականացում, ինչպես նաև վերջինիս կապակցությամբ իրականացվող աշխատանքային քննարկումներին մասնակցություն, առաջարկների ներակայացում.
- Փորձագիտական բնագավառում գործունեություն ծավալող պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունների ուղղությամբ իրականացվող հետազոտությանը մասնակցություն, մասնագիտական դիրքորոշման ներկայացում.
- «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների իրականացմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն.

• Այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նախագծերի, միջազգային կազմակերպություններից ստացված զեկույցների, քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի և ներկայացված առաջարկությունների ուսումնասիրություն և մասնագիտական դիրքորոշման ներկայացում:

Ֆիսկալ ռիսկերի կառավարման
վարչության փորձագետ՝ Գոհար Սաթունց